**Նոտարական ակտի կոդ:** 737-20190618-88-3951476
**Նոտարական ակտի գաղտնագիր:** WP1O2Y

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
երկու հազար տասնինը թվականի մայիսի քսաներկուսին <<Սյունիքի մարզ>>
նոտարական տարածքի նոտար Նարեկ Պողոսյանի կողմից կնքված և սեղանամատյանում
թիվ 524 համարով գրանցված բնակարանի վարձակալության պայմանագրում
փոփոխություն կատարելու մասին

Երկու հազար տասնինը թվականի հունիսի տասնութին
քաղաք Մեղրի, Սյունիքի մարզ, Հայաստանի Հանրապետություն

Մենք՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի **ՎԱՐԴԱՆ ՀԱՄԼԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**, ծնված՝ 04/01/1966թ-ին, անձնագիր՝ 46 11 259941, տրված՝ 500-065-ի կողմից, 22/02/2011թ-ին, ստորաբաժանման ծածկագիր՝ 500-065, որի անունից լիազորագրով հանդես է գալիս **ԲԱԲԿԵՆ ՂԵՎՈՆԴԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ**, ծնված՝ 10/03/1985թ-ին, ՀԾՀ՝ 2003850376, անձնագիր՝ AR0425842, տրված՝ 045-ի կողմից, 15/08/2017թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ՄԵՂՐԻ, ԱԳԱՐԱԿ, ԿՈՄԻՏԱՍԻ Փ., 12Բ Տ, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» մի կողմից և
<<Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե>>, հասցե՝ քաղաք Երևան, Կենտրոն, Մ. Խորենացու փողոց 3,7, գրանցման համար՝ 286.184.1025088, ՀՎՀՀ՝ 02647057, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որի անունից 07.06.2019 թվականին տրված լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ՝ **ՀԱՄԼԵՏ ԳՈՒՐԳԵՆԻ ԵՐԻՑՅԱՆԸ**, ծնված՝ 17/08/1973թ-ին, ՀԾՀ՝ 2708730126, նույնականացման քարտ՝ 001832518, տրված՝ 026-ի կողմից, 22/01/2014թ-ին, հաշվառված՝ ԱՐԱՐԱՏ, Գ.ԱՐԱՐԱՏ, ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ Փ., 51 Տ, այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ», մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով երկու հազար տասնինը թվականի մայիսի քսաներկուսին կնքված և սեղանամատյանում թիվ 524 համարով գրանցված բնակարանի վարձակալության պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.2 կետը, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին՝
Փոփոխել «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար՝ Նարեկ Պողոսյանի կողմից երկու հազար տասնինը թվականի մայիսի քսաներկուսին վավերացված, սեղանամատյանի համար՝ 524, «Բնակարանի վարձակալության պայմանագրի 3.3 կետը», որով վարձակալության էր տրվել Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաք Չարենց փողոցի 12 /տասներկու/ շենքի թիվ 1 /մեկ/ հասցեում գտնվող բնակարանը, որը բաղկացած է 93,1 /իննսուներեք ամբողջ մեկ/ քառակուսի մետր ընդհանուր մակերեսից:
Նշված պայմանագրի 3.3 կետը շարադրել հետևյալ կերպ.
3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի անունով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> Փակ բաժնետիրական ընկերության թիվ 1150017461101186 հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:
2. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Պայմանագրի հետ կապված ծախսերը կատարվում են վարձատուի կողմից:
4. Սույն համաձայնագիրը կողմերի ցանկությամբ կնքված է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
5. Համաձայնագրի բովանդակությունը կողմերի կողմից ընթերցվեց:
6. Բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին:

«ՎԱՐՁԱՏՈՒ»---------------------------------------------------------------------------------------------

**ՎԱՐԴԱՆ ՀԱՄԼԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,**
լիազորված անձ՝ **ԲԱԲԿԵՆ ՂԵՎՈՆԴԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

«ՎԱՐՁԱԿԱԼ»---------------------------------------------------------------------------------------------

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. 3, 7,
ի դեմս գլխավոր քարտուղար՝ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, որի անունից լիազորագրով
հանդես է գալիս լիազորված անձ **ՀԱՄԼԵՏ ԳՈՒՐԳԵՆԻ ԵՐԻՑՅԱՆԸ**

Երկու հազար տասնինը թվականի հունիսի տասնութին
սույն համաձայնագիրը բնակարանի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության «Սյունիքի մարզ» նոտարական տարածքի նոտար ՆԱՐԵԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ վարձատու իրավունքները ստուգված են:
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 611 (վեց հարյուր տասնմեկ) հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքներն ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում /երեսուն աշխատանքային օրվա ընթացքում/:

Գրանցված է սեղանամատյանում թիվ՝ 676 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Նարեկ Վիլիկի Պողոսյան